Լեռներում է իմ սիրտը (Ուիլյամ Սարոյան)

1914 թվականին, երբ ես բոլորովին փոքր էի, մի ծերունի երևաց մեզ մոտ, Սան-Բենիտո փողոցում. նա գնում էր զառամյալների տուն: Ծերունին գնում էր փողը փչելով, ու մեկ էլ կանգ առավ մեր տան առաջ: Ես բակից դուրս թռա մայթի վրա ականջ դնելու համար, բայց նա այլևս չէր փչում:

Այն ժամանակ ես ասացի.

-- Մի բան նվագեցե՛ք: Ես շատ եմ ուզում լսել:

Իսկ նա ասաց.

-- Երիտասարդ, մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս, որի սիրտն այստեղ չէ, այլ լեռներում:

-- Ո՞ր լեռներում, - հարցրեցի ես:

-- Շոտլանդական, - ասաց ծերունին: - Դե, մի բաժակ ջուր բերե՛ք:

-- Իսկ ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում:

-- Թախծում է, -ասաց ծերունին: - Խնդրում եմ, մի բաժակ սառը ջուր տվե՛ք:

-- Իսկ որտե՞ղ է ձեր մայրը, - հարցրեցի ես:

-- Իմ մայրը Տալսում է, Օկլահոմայի նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ:

-- Հապա որտե՞ղ է, - հարցրեցի ես:

-- Շոտլանդական լեռներում, - ասաց ծերունին: - Երիտասարդ, ես խիստ ծարավ եմ:

-- Այդ ինչպե՞ս է, որ ձեր ընտանիքի բոլոր անդամները սրտները թողնում են լեռներում, - հարցրեցի ես:

-- Ինչ արած, մենք այդպես ենք ստեղծված, - ասաց ծերունին: - Այսօր այստեղ ենք, իսկ վաղը՝ մնաք բարով:

-- Այսօր՝ այստեղ, իսկ վաղը՝ մնաք բարո՞վ, - կրկնեցի ես: - Այդ ինչպե՞ս:

-- Հիմա մենք ողջ ենք, ու մեկ էլ տեսար՝ չկանք, - ասաց ծերունին:

-- Լավ, իսկ ձեր մայրն ի՞նչ է անում Օկլահոմայի նահանգի Տալս քաղաքում, - հարցրեցի ես:

-- Թախծում է, ասաց ծերունին:

-- Իսկ որտե՞ղ է ձեր մոր մայրը, - հարցրեցի ես:

-- Նա Վերմոնտ նահանգում է, - ասաց ծերունին,- բայց նրա սիրտն այնտեղ չէ:

-- խեղճ ծերացած, չորացած սրտիկ, - ասացի ես: - Հապա որտե՞ղ է նա: Միգուցե էլի՞ լեռներում:

-- Այո, հենց իսկ և իսկ լեռներում, - ասաց ծերունին: - Տղաս, ես ծարավից մեռնում եմ:

Exercices :

I. Mettez à la voix passive :

1. Ծերունին փող էր փչում փողոցում:
2. Նա նվագում էր շոտլանդական մի եղանակ:
3. Ջոննին մի բաժակ գարեջուր բերեց ծերունու համար:
4. Նրա մայրը նամակ չէր գրում որդուն:

II. Mettez à la voix active :

1. Քարերը հավաքվում են ծովի ափին:
2. Շատ լեզուներ են սովորեցվում մեր համալսարանում:
3. Բոլոր գրքերը վաճառվում են այս գրախանութում:
4. Մեր հայերեն նամակները գրվում են ուսուցչի կողմից: